

ծով կ'անցնի, ու նաև Արուսյայի ծովեզերքը կը զարնէ : Աւ ծով Տրապիզոնի մօտերը 1642ին այնչափ բազմութեամբ դիզուեցաւ այս ձուկն որ բնակիչքը սկըսան վախնալ որ չլլայ թէ հոտելով օդն ապականէ և հիւանդութիւն ձգէ . բայց աստուածային նախախնամութեւ բազմութիւն աղուաներու եկաւ ու բոլոր լափեց : Իսկ Արուսյայի ծովեզերքները զոր օրինակ Խալանտա՝ ռինկա ձրկան հետ այնչափ բազմութեամբ սարտէլ և մէզիտ ըսուած ձկները կը ժողվին որ տեղացիք ժողվելով իրենց փշերն ալ կը մանրեն կը լոսեն և կովերու ու ձիերու կերակուր կու տան : Բերիկայի մէջ ալ Բաւարիայի ու Եւրոպայի միջոցը եղած վայրենիները իրենց մօտ գետէ մը այնչափ ռինկա կը ժողվեն որ տարի եղեր է կ'ըսեն , որ օրուան մէջ յիսուն հազար տակառ լեցունելով՝ ամիս մը շարունակ որսացեր են : Բմանապէս Ա իրգինիայի բնակիչքն ալ կը պատմեն թէ իրենց գետերը այնպէս ձկներով կը լեցուին որ ձիով վրանին կոխկռտելով կ'անցնին եղեր :

Թէ որ այսչափ ռինկա ձկան բազմութեան կէսը միայն հաւկիթ ձգեր իրեք կամ չորս անգամ մը , ան ատեն բոլոր Ավիանոսը պզտիկ կու դար , վասն զի անհամար թուով հաւկիթ կը ձգեն : Եւսանկ ալ հարաւային ծովերուն մէջ շատ տեսակ ձկներ կը գտնուին . ուրով կը տեսնենք որ Եստուած ձկանց շտեմարան մը դրեր է բւեռային ծովերը՝ մարդկանց ապրուստի մեծ հնարք մը տալով զանոնք :

Բերիկայի հիւսիսային չորմերը մեղր քաղելու  
իւրա :

ՇԱՏ անգամ կը տեսնենք մեղուններ որ անտառներու մէջ ու ծառոտ ծաղկոտ տեղումներ կը թռչտին . և իրենց բնական ժրութիւնը ճանչնալով՝ չենք տարակուսիր որ մեղր շինելու ետեւ են . բայց անձանթ տեղումներ կը ծածկեն

իրենց պատուական վաստակը , ինչպէս ծառերու խողուններու մէջ : Եւսանկ մեղուններ շատ կան Բերիկայի հիւսիսային կողմերը՝ հին ծառերու մէջ մեղր շինող . այս մեղրը քաղելու համար հետեւեալ հնարքը կը բանեցընեն տեղացիք :

Եստառներուն մօտ եղած ծաղկուններուն վրայէն նոյն մեղուններէն քանի մը հատ բռնելով տրփի մը մէջ կը փակեն , մէջը կտոր մը մեղր դնելով . և խուփին վրայ ալ կտոր մը ապակի անցուցած որ լոյս առնուն : Երբոր մեղունները կշտանան սնտուկին մէջ եղած մեղրովը , երկու իրեք հատ մը անոնցմէ կը թողուն , և կը դիտեն դէպ ՚ի որ կողմը թռչելնին . և ուր որ աչքի աներևոյթ կ'ըլլան , մեղրորսը մէկէն հոն կը վազէ և դարձեալ քանի մը հատ ալ հոն կը թողու , նոյնպէս դիտելով իրենց թռչելուն ուղղութիւնը . և այս գործողութիւնս կը շարունակէ , մինչև տեսնէ որ մեղունները ալ առաջիններուն բռնած շտկութեան հակառակ կողմն ելթան : Եւս որ ըլլայ՝ որսորդը կ'իմանայ որ իր փնտռած տեղէն անդին անցած է . վասն զի փորձուած է որ երբոր մեղու մը իր բնակութեան ծառին մէկ կողմը բաւական հեռու եղած ծաղկին վրայէն վերցուի , և ամանի մը մէջ գոցած նոյն ծառին մէկալ կողմը տարուելով ազատ թողուի , մեղուն շրջան մը ընելով կը դառնայ շիտակ իւր բնակարանին ուղղութիւնը կը բռնէ : Երբոր մեղրորսը մեղուններուն ընթացքը դիտելով , կ'իմանայ որ փնտռած ծառին մօտն է , տաքցուցած աղիւսի մը վրայ կտոր մը մեղր կը դնէ , որուն հոտը տարածուելով , մէկէն ծառին բնակած մեղունները վրան կը թափին . նոյն միջոցին մեղրորսը ծառը կտրել կը նայի իր ընկերներուն հետ . քիչ անգամ կը հանդիպի որ ծառին խողովին մէջ գտնուած մեղրը այս աշխատութիւնը չի պսակէ , վասն զի շատ անգամ 70 և երբեմն ինչուան 150 լիպրէ մեղր կ'եղէ անկէ :